ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

«ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-26/32» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի[i] գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ **« 25 » Սեպտեմբերի, 2026թ.**
ժամը՝ 10:00

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳԱՊ) — Պապին Գալստյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) — Արայիկ Ստեփանյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ֆինանսական, հաշվապահական հաշվառման և համայնքային բյուջեների վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) — Մերի Աղեկյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) — Աննա Ավագյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ) — Զանուշ Հայրապետյան

« ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-26/32» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված գնման առարկայի վերաբերյալ
2. Ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստի հաստատման վերաբերյալ
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օր և ժամ սահմանելու վերաբերյալ:

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված գնման առարկայի վերաբերյալ

1.1 Գնման առարկա է հանդիսանում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական փոխադրումներ կատարող «C», «D», «CE», «DE», «C1E», «D1E» կարգ (ենթակարգ) ունեցող վարորդների մասնագիտական որակավորման վկայականի (ՄՈՎ) (այսուհետ՝ վարորդների մասնագիտական որակավորման վկայական) ձեռքբերումը, որոնք խմբավորված են « 1 » չափաբաժնում՝

Չափաբաժնի		*Չափաբաժնի անվանումը*
համարը	*գնման գինը**	
1	-	**Վարորդների մասնագիտական որակավորման վկայականների (ՄՈՎ) պատրաստման՝ տպագրական ծառայություններ**

** Գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա՝ պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը: Նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագիր առկա չէ:*

2. Ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստի հաստատման վերաբերյալ

2.1 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 14-րդ կետի 1-ին ենթակետի, 31-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման 24.09.2026թ. Ն/25.1/4595-2026 հերթական համարով ներկայացված N 1 գնման հայտը ո ր ո շ ու մ է.

1) Հաստատել Ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստը:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օր և ժամ սահմանելու վերաբերյալ

3.1 Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամակետին հաջորդող աշխատանքային օրը՝ 2026 թվականի հոկտեմբերի 12-ին, ժամը 16:00-ին:

Որոշումն ընդունվել է՝ ***կողմ- 4 դեմ-0***

Հանձնաժողովի նախագահ՝	**Պապին Գալստյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Արայիկ Ստեփանյան**	.....
	Մերի Աղեկյան	.....
	Աննա Ավագյան	.....
Քարտուղար՝	**Զանուշ Հայրապետյան**	.....

[i] Սույն գնումն իրականացվում է համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 3-րդ մասի: Գնման առարկան ներառված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված ցուցակում: